Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս. 7 + ս. 8)	այդ թվում՝	
						վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8
2920	09	2	0	Միջնակարգ ընդհանուր կրթություն	0	0	0
				որից՝			
2921	09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն	0	0	0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0	0	0
							
							
2922	09	2	2	Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն	0	0	0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0	0	0
							
							
2930	09	3	0	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	300	300	0
				որից՝			
2931	09	3	1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	0	0	0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0	0	0
							
							
2932	09	3	2	Միջին մասնագիտական կրթություն	300	300	0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	300	300	0
				-Այլ նպաստներ բյուջեից	300	300	0
							
2940	09	4	0	Բարձրագույն կրթություն	1000	1000	0
				որից՝			
2941	09	4	1	Բարձրագույն մասնագիտական կրթություն	1000	1000	0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	1000	1000	0
				-Այլ նպաստներ բյուջեից	1000	1000	0
							
2942	09	4	2	Հետբուհական մասնագիտական կրթություն	0	0	0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0	0	0
							
							
2950	09	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	46327,3	46327,3	0
				որից՝			
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	46327,3	46327,3	0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	46327,3	46327,3	0

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
						վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	45700	45700	
				-Մուքսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	627,3	627,3	
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	0	0	
2952	09	5	2	Լրացուցիչ կրթություն	0	0	
				այդ թվում ծախսերի վերձանում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0	0	
							
							
2960	09	6	0	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	0	0	
				որից՝			
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	0	0	
				այդ թվում ծախսերի վերձանում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0	0	
							
							
2970	09	7	0	Կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ	0	0	
				որից՝			
2971	09	7	1	Կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ	0	0	
				այդ թվում ծախսերի վերձանում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0	0	
							
							
2980	09	8	0	Կրթություն (այլ դասերին չպատկանող)	500	500	
				որից՝			
2981	09	8	1	Կրթություն (այլ դասերին չպատկանող)	500	500	
				այդ թվում ծախսերի վերձանում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	500	500	
				-Մուքսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպություններին	0	0	
				- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	500	500	
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող3010+տող3020+տող3030+տող3040+տող3050+տող3060+տող3070+տող3080+տող3090)	8900	8900	
				այդ թվում՝			
3010	10	1	0	Վատառողջություն և անաշխատունակություն	900	900	
				որից՝			
3011	10	1	1	Վատառողջություն	900	900	
				այդ թվում ծախսերի վերձանում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	900	900	
				- Սոցիալական ապահովության բնեղեն նպաստներ ծառայություններ մատուցողներին	900	900	

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

29-ը Հունվարի 2013թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/




N 7-Ն ՈՐՈՇՈՒՄ


Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/2, 53 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝


Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ համայնքի քառամյա զարգացման ծրագիրը:

ԱՎԱԳԱՆԻ՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -կողմ 
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ -կողմ 
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ -կողմ 
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՅԱՆ -կողմ 
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ -կողմ 
ԱՐԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ -կողմ 

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ -կողմ 
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ - կողմ 
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -կողմ 
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ - կողմ 
ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ -կողմ 
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ -կողմ 

ՔԱՂԱՔԱՂԵՏ՝  Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ



ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ

2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 29.01.2013թ. N 7-Ն որոշմամբ

ԱՇՏԱՐԱԿ 2013թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Համայնքի իրավիճակի վերլուծություն և գնահատում
 2. Հանրապետական և մարզային ծրագրերով նախատեսվող, համայնքին առնչվող իրականացվելիք միջոցառումների ներկայացում և գնահատում
 3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
 4. Համայնքի ըստ առանձին ոլորտների առաջնահերթ նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում
 5. Համայնքի ֆինանսական միջոցների վերլուծություն և կանխատեսում
 6. Համայնքի ոլորտային կապիտալ ծրագրերի ձևակերպում և ամփոփում
 7. Համայնքի քառամյա զարգացման ծրագրի հիմնական ցուցանիշները
- Հավելված 1 Քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը
- Հավելված 2. Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը
- Հավելված 3. Համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագրի մշակման, քննարկման և հաստատման ժամանակացույցը

Ներածություն

Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Աշտարակ համայնքի 2013-2016թթ. սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը մշակվել է՝ հիմք ունենալով 2009-2012թթ. քառամյա ծրագիրն ու համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները, նպատակ ունենալով բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Գալիք չորս տարում համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են լինելու համայնքի բնակչության և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելը, համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների ապահովումը, համայնքի բնակելի շենքերի և այլ շինությունների պահպանման, շահագործման և նորոգման ապահովումը, բնակարանային կոմունալ տնտեսության բարեկարգման և քաղաքի արտաքին լուսավորության բնագավառում կապիտալ ներդրումներ կատարելը, համայնքի կանաչ գոտիների և զբոսայգիների վերականգնումը, կրթության, մշակույթի և մարզական օջախների վերազինման և նպատակային գործունեությանը հատուկ ուշադրություն դարձնելը, համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը, համայնքի ֆինանսական կացության բարելավումը՝ համագործակցելով հարկային մարմինների հետ, իրականացնելով հարկային և ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման ձևերի քաղաքականություն, համայնքի բյուջեի միջոցները նպատակային օգտագործելը՝ բարձրացնելով բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը, քաղաքապետարանի և նրա ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների ու ձեռնարկությունների աշխատանքների արդյունավետությունը:

1.1 *Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ*

1996թ-ից Արագածոտնի մարզկենտրոն դարձած Աշտարակ համայնքը հանրապետության միջին մեծության քաղաքներից է:

Գտնվում է Երևանից մոտ 20կմ հյուսիս-արևմուտք, Քասաղ գետի երկու ափերին, ծովի մակերևույթից 1075մ միջին բացարձակ բարձրության վրա: Ավտոմոբիլային ճանապարհների կարևոր խաչմերուկ է: Գտնվում է Երևան-Վանաձոր, Երևան-Գյումրի, Վանաձոր-Էջմիածին ուղիների հատման վայրում:

Աշտարակ հնամենի բնակավայրը հիշատակվում է անհիշելի ժամանակներից:

Նրա անվան շուրջ տարբեր մեկնաբանություններ կան: Տեղանվան մեկնաբանման փորձեր են արել Նիկողայոս Մառը, Գրիգոր Ղափանցյանը, Հակոբ Մանանդյանը:

Բնակիչների ասելով Աշտարակ անունն առաջացել է գյուղի ամենամեծ ծխական եկեղեցու՝ Ծիրանավորի, դիրքից:

Ակադեմիկոս Մառի ասելով՝ Ծիրանավոր եկեղեցու տեղում, հեթանոսության ժամանակաշրջանում եղել է Շտեկի պաշտամունքի մի տաճար, որի շուրջ հետագայում գոյացել է գյուղ և հնագույն սրբության անունով կոչվել է Աշտարակ:

Ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանն իր ծննդավայրի՝ Աշտարակի անվան բացատրությունը առնչում է սիրո և զգվանքի աստրական աստվածուհի Իշտարի անվան փյունիկյան Աշտար արտահայտչաձևին:

Աշտարակը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, աչքի է ընկնում պատմական և ճարտարապետական հուշարձանների առատությամբ, ինչպես նաև Հայաստանի չափանիշներով բարենպաստ կլիմայով: Աշտարակը պատմականորեն միշտ աչքի է ընկել ավանդույթների անխառն պահպանմամբ և իր ուրույն դեմքն ունենալու շնորհիվ ներկայացել է որպես Հայաստանին առավել բնորոշ գյուղ, իսկ 1965թ-ից՝ որպես քաղաք: Աշտարակ քաղաքը իր ուրույն տեղը ունի նաև Հայաստանի գյուղատնտեսության, արդյունաբերության և հատկապես գիտության մեջ:

1.1 Ժողովրդագրություն

Համայնքի բնակչության առկա թիվը 18915 մարդ, մշտական բնակվողների թիվը՝ 20632, որից կանայք 10548, տղամարդ 10088: Ընտանիքների /ծխերի/ թիվը՝ 6541

Բնակչության տարիքային կազմը՝

Տարիքային խումբ	Թիվը	Տղամարդ	Կին
0-4 տարեկան	1195	670	525
5-9 տարեկան	1472	742	730
10-14 տարեկան	2097	1012	1085
15-19 տարեկան	1971	969	1002
20-24 տարեկան	1761	941	820
25-29 տարեկան	1554	848	706
30-34 տարեկան	1292	655	637
35-39 տարեկան	1592	781	811
40-44 տարեկան	1874	906	968
45-49 տարեկան	1299	594	705
50-54 տարեկան	1011	494	517
55-59 տարեկան	553	233	320
60-64 տարեկան	971	421	550
65-69 տարեկան	749	334	415
70-74 տարեկան	670	306	364
75-79 տարեկան	384	137	247
80 տարեկան և ավելի	187	45	142

Աշխատունակ մարդկանց թիվը մոտ 15968 մարդ /ամբողջ բնակչության մոտ 74%-ը/, որից զբաղվածների թիվը կազմում է մոտ 5.2 հազար մարդ /բնակչության թվի մոտ 25%-ը/, աշխատանք փնտրողները՝ 890 մարդ, որից 660-ը՝ կին, զբաղվածության կենտրոնում գրանցված գործազուրկների թիվը՝ 720, որից 570-ը՝ կին, նպաստառու գործազուրկները կազմում են 901 մարդ: Կին գործազուրկների թվի հետագա աճի միտումի է նկատվում, որոնց 60%-ից ավելին ունեն դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաներ: Թոշակառուների ընդհանուր թիվը կազմում է 3658: Դրա հետ մեկտեղ, վերջին տարիների ընթացքում կտրուկ աճել է ընտանիքներով, երկարաժամկետ արտագնա աշխատանքների մեկնողների թիվը, ինչը հնարավորություն չի տալիս համայնքի ազգաբնակչության քանակական փոփոխության և, ընդհանրապես, դեմոգրաֆիկ վիճակագրության ամբողջական պատկերը ներկայացնելու ավելի ճշգրիտ: Համայնքում ապրում են 412 փախստական ընտանիք /1036/:

Մոտղագուրկ երեխաների թիվը կազմում է՝ միակողմանի - 200, երկկողմանի - 5: Հաշմանդամների թիվը՝ 1365: Արցախյան հերոսամարտում զոհվածների թիվը՝ 25: Քաղաքապետարանում հաշվառված անօթևան ընտանիքների թիվը՝ 15:

1.2 Տեղական ինքնակառավարման մարմինները

Տեղական ինքնակառավարման համակարգը արդեն թևակոխել է գործնական ծրագրերի իրականացման փուլ: Համայնքապետի ղեկավարությամբ օրեցօր մեծ տեղ է հատկացվում նոր հարաբերությունները կյանքի կոչելու խնդիրներին ու դրանց իրականացմանը:

Ավելի մոտ գտնվելով բնակչությանը և քաջատեղյակ լինելով համայնքի առանձնահատկություններին, հանդիսանալով իշխանության առանձին օղակ, այսօր ինքնուրույն ձևով և անձնական պատասխանատվությամբ են լուծվում համայնքի առջև ծառացած խնդիրներն ու հարցերը:

Բնակֆոնդի և հասարակական վայրերի սպասարկում, սանիտարական մաքրում, աղբահանություն, կանաչապատում և լուսավորում, կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների սպասարկում: Ահա այն կարևոր բնագավառների ոչ լրիվ ցանկը, որոնք սպասարկում է տեղական ինքնակառավարման մարմինը:

Քաղաքապետարանի մշտական ուշադրության կենտրոնում են խմելու և ոռոգման ջրամատակարարման, կապի, տրանսպորտի սպասարկման բարելավման, փոքր և միջին բիզնեսի զարգացման հարցերը:

Սակայն նշված և ևս կարևոր շատ հարցերի լուծման ճանապարհին դժվարություններ են առաջանում կապված ֆինանսական միջոցների հետ:

Համայնքի առջև ծառացած խնդիրներին և առօրյա հարցերին օպերատիվ ձևով լուծում են տալու քաղաքապետարանի աշխատակազմը, որը բաղկացած է 33 համայնքային ծառայողից /կան նաև պայմանագրային կարգով աշխատողներ/, համայնքային բյուջետային հիմնարկները առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները: Քաղաքի ամբողջ տարածքում բնակչության հետ անմիջականորեն տարվող աշխատանքները կոորդինացվում, քաղաքապետի ընդունած որոշումների ու կարգադրությունների մասսայական աշխատանքներին աջակցում են թվով 13 Տարածքային կառավարման տեղամասերը (ՏԿՏ-ները):

Աշտարակ քաղաքային համայնքի ՏԻՄ-երը ընտրվել են 2012 թ. Սեպտեմբերի 23-ին, համայնքի ավագանին բաղկացած է 15 անդամից: Աշտարակի քաղաքապետարանը ունի քաղաքապետի 2 տեղակալ, աշխատակազմի քարտուղար, քաղաքապետի օգնական,

Կառուցվածքային ստորաբաժանումներ՝

- Կրթության, մշակույթի, սպորտի և սոցիալական հարցերի բաժին
- Ֆինանսատնտեսագիտական բաժին
- Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին
- Ներքին առևտրի բաժին

Առանձնացված ստորաբաժանումներ՝

- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Աշտարակի տարածքային բաժին
- Պայմանագրային աշխատողներ - 15*

Համայնքն ունի իր զինանշանը, դրոշը և օրհներգը:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը ներկայացված է հավելվածի տեսքով:

1.3 Ճարտարապետություն և քաղաքաշինություն

Աշտարակը հայկական իրականության վաղ, ինչպես նաև միջին դարերի ճարտարապետական կոթողների բնակավայր է: Այդ են վկայում մինչ այժմ գոյություն ունեցող պատմական մեծ արժեք ներկայացնող 4-17-րդ դարերի Ծիրանավոր, Սպիտակավոր, Կարմրավոր, Մարինե եկեղեցիները, ուրարտական ժամանակաշրջանի ջրանցքը և այլն:

Աշտարակը գրավոր աղբյուրներում հիշատակվում է 9-րդ դարից սկսած, սակայն ձորամիջյան քարայր կացարանները, քաղաքը շրջապատող դամբարաններն ու աշտարակները ծոռում են հազարամյակների ապրած բնակավայրերի մասին: Պահպանված բազմաթիվ հայ արվեստի և ճարտարապետության նշանավոր հուշարձաններից արժանահիշատակ են «Մայր առու» կամ «Ականատեսի առու» մթա 8-7 դդ-ի գործող ժայռափոր ջրանցքը, հեթանոսական մեհյանի վրա 5-րդ դարում կառուցած ծիրանավոր ա. Աստվածածին եռանավ բազիլիկ եկեղեցին, որը կառուցվածքային պարզությամբ, հարադրանքի տարրերով առանձնահատուկ կարևորություն ունի վաղ շրջանի հայկական եռանավ բազիլիկների շարքում: Հայկական ճարտարապետության գոհարներից է համարվում կենտրոնագմբեթ փոքր եկեղեցիներին պատկան Կարմրավոր ա. Աստվածածին միախորան խաչաձև հիմքով եկեղեցին: Քաղաքում մյուս նշանավոր հուշարձաններից են 1287-ին կառուցված ա. Մարինե եկեղեցին՝ սրածայր գմբեթով և ծավալի վերապահ հորինվածքով, Քասախի կիրճի պոնկներին դեմ-դիմաց կանգնած, 12-13 դդ-ի Սպիտակավոր և ա. Մարգիս եկեղեցիները, ինչպես նաև ներքևում՝ գետի վրա, վեհորեն կանգուն՝ 76.2մ երկարությամբ և 6 մ լայնությամբ, եռաթոփչք տուֆակերտ կամուրջը՝ կառուցված 1664թ., որի առաջին հենակամարը մուտք է հանդիսանում կից պատմական ջրաղացին: Իր արտաքին ճարտարապետության մեջ տուֆաքարի բազմագույն նրբագեղությամբ հանրահայտ հուշարձան է Մուղնու ա. Գևորգի վանական համալիրը՝ կառուցված 1664-1669 թթ., ճարտարապետներ Սահակ Հիզանեցու և Մուրադ Մուղնեցու կողմից: Աշտարակ քաղաքը հանրապետության այն բացառիկ բնակավայրերից է, ուր պահպանվել են 18-19 դդ-ի հայկական ժողովրդական տների հիանալի օրինակներ:

Աշտարակը հարուստ է նաև ժողովրդական տների ճարտարապետությամբ, որոնք, ցավոք, ոչնչացվեցին 60-ական թթ., նրանց տեղը կառուցելով միապաղաղ 5 հարկանի շենքեր, որոնք այժմ շահագործման համար պիտանի չեն: Աշտարակի նախկին կերպարը, որպես յուրահատուկ քաղաք չի պահպանված: Կառուցված են շենքեր, որոնք իրենց ճարտարապետական տեսքով և նախագծային լուծումներով չեն կապվում ռելիեֆի հետ, ընդհանրապես կառուցելիս հաշվի չառնելով քաղաքի գլխավոր հատակագիծը:

Մոցիալիստական ժամանակաշրջանում ծավալված պլանաչափ, բայց հախուռն շինարարությունը, որի ժամանակ կառուցվում էին շաբլոն, ստերեոտիպ նմուշների շենքեր, հաշվի չէր առնվում ոչ միայն Աշտարակի բնական, ազգային և պատմական առանձնահատկությունները, այլև սահմանված խիստ նորմատիվներով սահմանափակում է քաղաքացիների նորմալ ապրելակերպի կազմակերպման հնարավորությունները:

Ներկա ժամանակում հնարավորություն ունենք գերծ մնալու նախկինում կառուցված շաբլոն ստերեոտիպ նմուշների շենքերից, շինություններից և կառուցելու Աշտարակ քաղաքի կերպարին և միջավայրին հարազատ կառույցներ, որոնք քաղաքին թույլ կտան ունենալ իր յուրահատուկ դեմքը:

Ոչ պետական, ոչ համայնքային սեփականություն հանդիսացող բազմաթիվ շենքեր վերածվել են ավերակների:

1.4 Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքն ունի սեփականություն, որն օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում են տեղական ինքնակառավարման մարմինները: Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ (Համայնքի սեփականություն համարվող ներկայում առկա գույքի ցանկը ներկայացված է հավելված 2-ի տեսքով) հետևյալ կազմով՝ համայնքի տարածքում գնվող 5 մանկապարտեզ, 4 մասնագիտացված դպրոց, 2 մշակույթի տուն և մեկ գրադարան, ջեռուցման, ջրմուղի, կույուղու, ոռոգման, գազի ցանցեր, փողոցներ, մեկ հրապարակ, հանգստի 2 զբոսայգի և բացօթյա խաղահրապարակներ, 2 վարչական շենք և այլն:

Վերջին տարիների տնտեսական անկման հետևանքով առավել վատ վիճակում են գտնվում ինժեներական ցանցերը: Նրանց համար կպահանջվեն մեծ տեխնիկական և նյութական միջոցներ: Նախկինում ձևավորված ինժեներական ցանցը չի շահագործվում կամ շահագործվում է մասամբ: Գործնականում յուրաքանչյուր ընտանիք ունի խողովակաշարով մղվող ջրից օգտվելու հնարավորություն: Սակայն միշտ չէ, որ ջուրը բավարար չափով «անվտանգ» է գործածության համար: Ջրմուղի խողովակների մաշվածության պատճառով կեղտաջրերը կարող են թափանցել ջրամատակարարման համակարգ՝ հարուցելով աղիքային հիվանդություններ:

Ներկա պահին ինժեներական ցանցերը գտնվում են մասնավոր կառույցների տրամադրության տակ, որոնք պետք է ապահովեն նրանց շահագործման և սպասարկման գործընթացը:

Համայնքին պատկանող ճանապարհային ցանցը ամեն տարի վերանորոգվում է համայնքի բյուջեի միջոցներով: Սակայն ներկայումս հիմնական վերանորոգման կարիք է զգում մոտ 20 կմ ճանապարհ: Գոյություն ունի նաև ճանապարհային ցանցի ընդլայնման պահանջ, մոտ 2.5 կմ երկարության լրացուցիչ ճանապարհներ:

Աղյուսակ 1. Համայնքի ենթակառուցվածքների գնահատում

Հ/հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Մակերես, քառ. մ.	Ընդհանուր վիճակի գնահատական	/վերականգնման /փոխարինման
1	Ա.Մուրադյան մանկապարտեզ	Պողոսյան 10	1975	2130	Վատ	մասնակի
2	Հասմիկ մանկապարտեզ	Աշտարակեցու 80	1980	4950	Վատ	մասնակի
3	Մանուշակ մանկապարտեզ	Գ. Ղափանցյան 1	1979	3240	Բավարար	մասնակի
4	Հովիկ մանկապարտեզ	Արտակի 1	1961	4050	Բավարար	չունի
5	Արևիկ մանկապարտեզ	Ա. Մանուկյան	1975	4890	Վատ	լիարժեք
6	Քաղաքային մշակույթի տուն	Ն. Աշտարակեցու 5	1950	1436	Բավարար	մասնակի
7	Արայի մշակույթի տուն	Արցախի 15	1964	2652	Վատ	մասնակի
8	Քաղաքային մարզադպրոց	Ն. Աշտարակեցու 90	1980	500	Վատ	լիարժեք
9	Քաղաքային զբոսայգի	Ա. Մանուկյան	1960	64000	Բավարար	լիարժեք
10	Քաղաքապետարանի վարչական շենք	Ն. Աշտարակեցու հր.7	1961	1670	Բավարար	մասնակի
11	Ներհամայնքային կամուրջ	Նաիրյան	1982	280	Բավարար	լիարժեք
12	Քաղաքային աղբավայր	Աշտարակ-Էջմիածին մայրուղի	1980	20000	Վատ	լիարժեք
13	Գերեզմանատուն	Ն. Աշտարակեցու փող		22000	Բավարար	մասնակի
14	Ներհամայնքային ջրամատակարարման համակարգ	ք. Աշտարակ	-	-	Վատ	լիարժեք
15	Ներհամայնքային ոռոգման համակարգ	ք. Աշտարակ	-	-	Բավարար	լիարժեք
16	Քաղաքային լուսավորության հենասյուներ	ք. Աշտարակ	1980	-	Բավարար	մասնակի
17	Ավտոտնակներ	ք. Աշտարակ	1961	1920	Վատ	մասնակի

Համայնքի ենթակառուցվածքներն ըստ ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշման և առկա գույքի ցանկը ներկայացված է հավելվածի տեսքով:

1.5 Բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկում

Համայնքի բնակարանային ֆոնդն ընդգրկում է 639873.0 հազար քառակուսի մետր մակերես: Աշտարակ քաղաքում բնակարանային ֆոնդի սպասարկումը իրականացվում է քաղաքապետարանի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից: Քաղաքում կա վթարային 3 շենք, 2-ը 5, 1-ը 4 հարկանի: Խորհրդային տարիներին բնակելի ֆոնդի կառուցումը, շահագործումը և պահպանումը իրականացվում էր պետական միջոցների հաշվին: Ներկայումս պետական միջոցների աղության պայմաններում բնակելի շինարարության ֆինանսավորման բեռը տեղափոխվում է անհատների միջոցների վրա: 2013թ-ից իրականացվելու է սոցիալական բնակարաշինության ծրագիրը:

Քաղաքում 675 ընտանիք բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն:

Բազմաբնակարան շենքերի բնակարաններ և բնակելի տներ

		Քանակը, միավորը	Ընդհանուր մակերեսը, քմ
1	Բազմաբնակարան շենքերի բնակարաններ, ընդամենը	3139	184415
1.1	Այդ թվում ըստ սենյակների քանակի՝ մեկ սենյակց և ասանց	463	14832
1.2	Երկու սենյականոց	914	42719
1.3	Երեք սենյականոց	1360	97920
1.4	Չորս սենյականոց	402	28944
2	Բնակելի տներ	3480	45548

Բազմաբնակարան շենքեր

		ընդամենը	Այդ թվում ըստ արտաքին պատեր նյութերի		Տանիքի ձևը՝ թեք
			քարից	պանելային	
1	Շենքերի քանակը, ընդամենը	202	157	45	202
1.1	Այդ թվում մեկ հարկանի				
1.2	Երկու հարկանի	135	96	39	135
1.3	Երեք հարկանի	9	9		9
1.4	Չորս հարկանի	18	17	1	15
1.5	Հինգ հարկանի	39	35	4	39
1.6	Ինը հարկանի	1		1	1

1.6 Հողօգտագործում

Համայնքի վարչական տարածքը 4233.80 հա, այդ թվում՝

- բնակարանային ֆոնդ – 1186,25 հա
- արտադրական նշանակության հողեր – 185,51 հա
- գյուղատնտեսական նշանակության հողեր- 2720.86 հա
- հանգստի գոտիներ- 3.02 հա
- ջրային ֆոնդեր – 17,05 հա
- այլ – 121,11 հա
- Բնակավայրի տարածքը -1186,0 հա
- Հողի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը – 2980
- Մեկ հողաբաժնի չափը – Աշտարակ տեղամասում՝ 0.3 հա, «Արայի» տեղամասում՝ 0,65 հա

- Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական պահուստային հողերը -
- Համայնքի սեփականություն համարվող հողերը – 1335,54 հա
- Օտարված և օգտագործման տրամադրված հողերը – 25,0 հա
- Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքները – 1437,6

հա

1.7 Գյուղատնտեսություն

Հողային ստորուկտուրան խիստ փոփոխական է համեմատած այլ շրջանների հետ: Մի փոքր հողակտորում կարող է լինել և սևահող, և գորշ շագանակագույն հող և անօգտագործելի տարածք:

Դարերի ընթացքում մշակվել է խաղող, որից ստացված գինիները աշխարհում մեծ համբավ են վայելում: Խերեսացված գինիների հիմնական շտեմարանը Աշտարակն է:

Գերակշիռ մասն է կազմում նաև պտղաբուծությունը, որը վերջին 20 տարիների ընթացքում մեծ առաջխաղացում է ապրել: Հիմնականում մշակվել է ինտենսիվ պտղաբուծական տնկարկներ /խնձորենի/, որը հարմարվելով տեղական բնակլիմայական պայմաններին տալիս է բարձր և որակով բերք:

Գյուղացիական տնտեսությունները զբաղվում են բանջարաբուստանային կուլտուրաների մշակմամբ, որը մասամբ է բավարարում քաղաքի առօրյա պահանջներին: Վերջին մի քանի տարիների ընթացքում բնակչությունը զբաղվում է նաև հացահատիկի, անասնապահական մթերքների արտադրությամբ, որը նույնպես չի բավարարում քաղաքի պահանջներին:

Գյուղատնտեսական զարգացմանը խոչընդոտում են գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունները, նախ և առաջ գյուղ. մթերքների ցածր գները, ոռոգման հետ կապված դժվարությունները, գյուղատնտեսության կարիքներին արձագանքելու անհրաժեշտ օղակների թերզարգացած վիճակը կամ իսպառ բացակայությունը /ազրոսպասարկման, ֆինանսավարկային, ապահովագրական/ և այլն:

Հաշի առնելով այն հանգամանքը, որ քաղաքի բյուջեի զգալի մասը ձևավորվում է հողի հարկից, պոտենցիալ հարկատուների տնտեսական վիճակը ձեռք է բերում կարևորագույն նշանակություն: Բնարկե չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ այդ հարցը առնչվում է նաև զբաղվածության, պարենային և այլ կարևորագույն խնդիրների հետ:

Արոտավայրերի ջրարբիացվածության մակարդակն անբավարար վիճակում է: Խոշոր և մանր եղջերավոր անասունների քանակը – 900 գլուխ

1.8 Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն

Աշտարակը անխոս ունի հրաշալի բնություն: Աշտարակի միջով է անցնում Հայաստանի ամենագեղատեսիլ գետերից մեկը՝ Քասաղ գետը, որն իր խորունկ ժայռերով դյուրիչ տպավորություն է թողնում Աշտարակ այցելած յուրաքանչյուր մարդու վրա: Խորը ազդեցություն է թողնում նաև հին կամուրջը, որը վերանորոգումից հետո ներկայացնում է հնի և նորի միաձուլումը: Աշտարակը միշտ առանձնացել է իր հարուստ և փարթամ բնությամբ, սակայն 90-ական թվականների ծանր ճգնաժամային տարիներն իրենց հետևանքը թողեցին, որի արդյունքում հսկայական հեկտարներով ֆաունա ոչնչացան՝ Կոմիտասի այգին, Քասախի կիրճում գտնվող ծառերը, կենտրոնական փողոցների մայրերին գտնվող ծառերը:

Աղբահանության ծավալը վերջին տարիներին բավականաչափ մեծացել է, որը նույնպես կնպաստի քաղաքի էկոլոգիայի բարելավմանը: Անմխիթար վիճակում է գտնվում համայնքային աղբավարը:

1.9 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

Աշտարակը ավտոմոբիլային ճանապարհների կարևոր խաչմերուկ է: Գտնվում է միջպետական նշանակության Երևան-Գյումրի M1 և Երևան-Վանաձոր M3 մայրուղիների հատման կենտրոնում:

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 51.6 կմ., իսկ մակերեսը՝ 45.8 հա.:

Աշտարակում գործում են մեկ հետիոտնային և երկու ավտոմոբիլային կամուրջներ: Աշտարակի ճանապարհային երթևեկության նշանների մեծ մասը տեղադրված են, և նախատեսվում է դրանց թիվը ավելացնել:

Առաջիկայում նախատեսվում է ավտոկանգառների նշանների տեղադրումը, այնուհետև, լուսացույցերի տեղադրումը Ն.Աշտարակեցու և Պոռշյան, Վ. Պետրոսյան և Նարեկացու փողոցների հատման խաչմերուկներում:

Համայնքի տարածքում մարդատար և երթուղային տաքսիների սպասարկման մակարդակը գտնվում է բավարար վիճակում: Առկա է երթուղին սպասարկող մեկ կազմակերպություն /6 միկրոավտոբուս/ և 9 տաքսի ծառայություն մատուցող կազմակերպություններ:

1.10 Առևտուր և սպասարկում

Առևտրական, հասարական սննդի, կենցաղային, տեխնիկական և այլ տիպի սպասարկումների զարգացումը հնարավորություն է տալիս աստիճանաբար բնակչության սոցիալական ոլորտի հետ կապված հարցերի լուծումը ապակենտրոնացնել և ծանրության կենտոնը տեղափոխել մասնավոր սպասարկումների վրա: Դա հնարավորություն է ստեղծում ազատ մրցակցության, և դրա շնորհիվ սպասարկումների որակի բարելավման ու գների աճի զսպմանը: Զարգացումը տանում է առևտրի և սպասարկումների մանր, անկազմակերպ և տարերային ձևերից դեպի փոքր ու միջին կայուն, ստացիոնար ձևերի: Ձևավորվում է որոշակի կայուն եկամուտներ ունեցող մի խավ: Վերջինս վճարունակ է ոչ միայն գույքի, այլև արտադրական տարածքի դիմաց, ինչպես նաև տեղական տուրքերի գծով: Այդ խավը պոտենցիալ կերպով կարող է դիտվել, որպես ազատ միջոցների առաջանալուն զուգընթաց՝ այլ ճյուղերում ներդրումներ կատարող և դրանց զարգացմանը նպաստող ուժ: Իսկ որպես հետևանք նա դառնում է նաև գործատու և աշխատատեղեր ստեղծող:

Աշտարակ քաղաքում գործում է՝

1. փոքր և միջին օբյեկտներ – 70
2. տոնավաճառներ – 2
3. հանրային սննդի օբյեկտներ – 10
4. բենզինի լիցքավորման կետեր – 10
5. գազի լիցքավորման կետեր – 14
6. տաքսի ծառայություն – 9
7. խաղատներ, զվարճանքի, շահումներով խաղերի օբյեկտներ – 5

1.11 Կրթություն

Համայնքի կրթական համակարգը ներառում է 6 հանրակրթական, 1 ավագ դպրոցները, հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների համար նախատեսված 1 դպրոցը և 5 մանկապարտեզները: Համայնքում գործող կրթական համակարգերից համայնքապատկան են հինգ նախադպրոցական ուսումնական հաստատությունները, որոնց գործունեությունը համակարգվում է քաղաքապետարանի համապատասխան բաժնի կողմից: ՆՈՒՀ-երում նախադպրոցական կրթություն են ստանում 3-6 տարեկան մոտ 600 երեխա:

Քաղաքում գործող ութ դպրոցների աշակերտների ընդհանուր թիվը կազմում է 2609, որոնց սպասարկում են 320 ուսուցիչ, որից ավագ դպրոցում համապատասխանաբար՝ 792, 98:

Ընդհանուր, միջնակարգ կրթությունը իրականացվում է հիմնականում հանրակրթական դպրոցներում, որտեղ սովորողների թիվը գրեթե հաստատուն է և ունի աճի տենդենցներ:

Համայնքապատկան են նաև համայնքում գործող 4 մասնագիտական դպրոցներ (երաժշտական, գեղարվեստի, պարարվեստի և մարզական), որոնց սովորողների ընդհանուր թիվը 413 է: Երաժշտական դպրոցը տեղափոխվել է նորակառույց շենք, որտեղ գործում են դաշնամուրային, լարային, ժող. գործիքների, վոկալի դասարաններ: Դպրոցում սովորող սաների թիվը հասնում է 145-ի: Գեղարվեստի դպրոցում ուսուցանվում են գծանկար, գունանկար, կոմպոզիցիա, դեկորատիվ կիրառական արվեստ, քանդակ, դիզայն, արվեստի պատմություն: Դպրոցում սովորողների թիվը հասնում է 100-ի: Պարարվեստի դպրոց-ստուդիայում ուսուցանվում են բազմաբնույթ պարեր, որի սաների թիվը հասնում է 100-ի:

1.12 Մշակույթ, սպորտ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Համայնքի մշակութային և երիտասարդական ակտիվ կյանքն ապահովում են երկու մշակույթի տները: Քաղաքային մշակույթի տունն ունի 450 նստատեղ, իսկ «Արայի» մշակույթի տունը գտնվում է վթարային վիճակում, որտեղ տեղակայված է գրադարանը՝ 41891 կտոր գրքով, Հայորդաց տուն, 3 թանգարան և երիտասարդական կազմակերպություն (Երիտասարդական հիմնադրամի Արագածոտնի մասնաճյուղ) և 1 մարզային գրադարան: Քաղաքի ակտիվ մարզական կյանքն ապահովում են քաղաքային մարզադպրոցը, հանրակրթական դպրոցների տարբեր սպորտային խմբակները, տարբեր մարզաձևերի ֆեդերացիաների տարածքային կազմակերպությունները, սպորտային ակումբը, հիմնարկ-ձեռնարկությունների թիմերը, մարզադաշտի ենթակայության տակ գործող մի շարք խմբակներ, անհատները: Մարզադպրոցում գործում է 8 խումբ՝ 3 մարզաձևով: Ընդհանուր մարզվողների թիվը հասնում է 350-ի: Համայնքի մարզադպրոցում մարզիկների թիվը հասնում է 90-ի: Մարզադպրոցի անբավարար և վթարային շենքային պայմաններից ելնելով 2009-ին սկսվել է նոր մարզական համալիրի կառուցումը, որը էլ ավելի կաշխուժացնի քաղաքի մարզական կյանքը:

1.13 Առողջապահություն

Աշտարակ քաղաքի առողջապահական համակարգում գործում են 1 բժշկական կենտրոն, 1 բժշկական ամբուլատոր պոլիկլինիկա, սանեպիդկայան, ատամնաբուժարան, շտապ բուժօգնության կայան և տասից ավելի դեղատներ: Առողջապահական համակարգում բուժաշխատողների միջին թվաքանակը՝ 146:

Հիվանդանոցում աշխատող բժիշկների թիվը 90 է: Բժշկական կենտրոնն ունի յոթ բաժանմունք, պոլիկլինիկական հինգ: Տարեկան սպասարկվում է մոտ 2000 հիվանդ: Ցածր է բուժաշխատողների աշխատավարձը: Այս բնագավառին հատկացվող գումարները բավարարում են միայն աշխատավարձի և կոմունալ ծախսերի վճարման համար:

1.14 Հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ, բակային տարածքներ

Քաղաքն ունի մեկ ընդարձակ զբոսայգի, երեք բացօթյա խաղահրապարակ, մեկ մարզադաշտ և Քասախի կիրճի բնական հանգիստի գոտին, ուր գործում են հանրապետությունում հայտնի «Աշտարակի Ձոր», «Աշտարակի լիճ» ժամանցի վայրերը, «Արևիկ» և այլ հանգստի գոտիներ:

Կապված 90-ական թվականների էներգետիկ ճգնաժամի հետ, քաղաքի կանաչ տարածքները մեծ վնաս կրեցին մասսայական ծառահատումներից: Անմխիթար վիճակում են քաղաքի զբոսայգիներն ու կանաչ գոտիները:

1.15 Համայնքի ուժեղ կողմերը

- Համայնքի աշխարհագրական դիրքը բարենպաստ է հեռանկարային զարգացման համար:
- Բարենպաստ բնակլիմայական պայմաններ:

Համայնքի հնարավորությունները

- Համայնքն ունի գիտա-արտադրական մեծ պոտենցիալ:
- Համայնքը պատմամշակութային հին քաղաք է և ունի տուրիզմի զարգացման լուրջ նախադրյալներ:
- Համայնքում ակտիվացել է առևտրային գործունեությունը, փոքր ու միջին ձեռներեցությունը:

Համայնքի թույլ կողմերը

- Անմխիթար վիճակում են գտնվում կոմունալ տնտեսության, ջրամատակարարման և ջրահեռացման, ոռոգման ցանցերը, ճանապարհային տնտեսության զգալի մասը:
- Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն համայնքի կրթական, մշակութային և մարզական հիմնարկների շենքերն ու շինությունները, բակային տարածքները:
- Համայնքի զգալի տարածքներում վատ է կազմակերպվում գյուղատնտեսական անհատական տնտեսություններին ոռոգման ջրի մատակարարումը:
- Նախորդ տարիների ընդհանուր տնտեսական ճգնաժամի պատճառով համայնքում ավելացել է գործազուրկների քանակը, առկա է նաև թաքնված գործազրկության խնդիրը:

Վտանգները

- Աղքատ է քաղաքապետարանի և նրա ենթակա կառույցների նյութատեխնիկական բազան, նրա հզորացումը պահանջում է ֆինանսական խոշոր միջոցների ներդրում:
- Համայնքում մեծ թիվ են կազմում սոցիալապես անապահով ընտանիքները, միայնակ թոշակառուները, ցածր եկամուտ ունեցողները, փախստական ընտանիքները:
- Բնակչության անվճարունակություն
- Վթարային բնակելի շենքերի առկայություն

2. Հանրապետական և մարզային ծրագրերով նախատեսվող, համայնքին առնչվող իրականացվելիք միջոցառումների ներկայացում և գնահատում

	Կատարվող աշխատանքի անվանումը	Հազ.դր
1	Աշտարակ քաղաքային համայնքի մշակույթի տան լոկալ ջեռուցման համակարգի կառուցում	12,460.30
2	“Քասախ” պարային համույթ ք. Աշտարակ	800.00
3	Աշտարակի մարզադպրոց	15000.0

4	ք. Աշտարակի թիվ 3 դպրոց	50000.0
5	Մ-1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման ա/ճ-ի Քասաղ գետի վրայի կամուրջ	16488.0

3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

Քառամյա զարգացման ռազմավարությունը ուղղված է համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակի ու որակի բարձրացմանը, այդ թվում նաև համայնքային կազմակերպությունների նյութատեխնիկական վերազինմանն ու համայնքի զբոսայգիների և կանաչ գոտիների վերականգնմանը, ինչպես նաև համայնքի տարածքում սոցիալական բնակարաշինության զարգացմանը:

4. Համայնքի ըստ առանձին ոլորտների առաջնահերթ նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակներն են՝

4.1. Տարածքային զարգացում, քաղաքաշինություն

- Արգելել քաղաքի ամբողջական տեսքը խաթարող ապօրինի շենքերի ու շինությունների կառուցումը:
- Բացառել կառուցապատման նպատակով քաղաքաշինական նորմերի խախտումներով նոր հողհատկացումները:
- Քաղաքին «վերադարձնել» և վերակենդանացնել քաղաքային զբոսայգին:
- Քաղաքաշինական հարցերը քննարկել մասնագետների, իրավասու կազմակերպությունների հետ՝ ապահովելով բնակչության մասնակցությունը:

4.2. Բնակարանային – կոմունալ տնտեսություն

- Արդիականացնել աղբահանության և սանմաքրման աշխատանքները, ընդլայնել մատուցվող ծառայությունների քանակը:
- ապահովել խոշոր կապիտալ ներդրումներ համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, լուսավորման, հանգստի և բակային տարածքների բարեկարգման բնագավառներում:
- Գեղարվեստական լուսավորությամբ ապահովել քաղաքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանները, խորհրդանիշ հանդիսացող շենքերն ու շինությունները:
- Վերականգնել քաղաքի արտաքին լուսավորությունը՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները:
- Բարեկարգել և լուսավորել երկրորդական փողոցները:
- Վերականգնել քաղաքի կանաչ գոտիներն ու պուրակները, կանաչապատել փողոցներն ու հրապարակները:
- Վերանորոգել քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքներն ու մուտքերը:
- Համայնքի տարածքում կառու իրականացնել սոցիալական բնակարանային համալիր
- Ապահովել համայնքի բնակելի շենքերի պահպանումը, շահագործումը և նորոգումը, աջակցելով համայնքի տարածքում համատիրությունների ստեղծմանը:

- Շարունակել բազմաբնակարան շենքերի մուտքերի հիմնանորոգումը: Կատարվելու են ապակեպատման, մուտքի դռների տեղադրման, ներքին հարդարման աշխատանքներ:
- Շարունակել թեք տանիքների լայնածավալ հիմնանորոգումը, ընդգրկելով բոլոր թաղամասերը:
- Խմելու ջրի մատակարարման համակարգում բարեփոխման աշխատանքներ տանելով ավելացնել ջրամատակարարումը
- Ապահովել թափառող կենդանիների վնասագերծման միջոցառումներն համայնքի տարածքում:

4.3. Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն, բարեկարգում

- 2013-2016թթ. նախատեսվում է շարունակել ներհամայնքային ճանապարհների համատարած ասֆալտապատման աշխատանքները:
- Նախատեսվում է վերականգնել ներքաղաքային երթևեկության հիմնական նշանները, բանուկ խաչմերուկներում՝ լուսակիրները:
- Կանոնակարգել հասարակական տրանսպորտի աշխատանքը, վերազինել կանգառներն ու կայանատեղիները, ապահովել անվտանգ երթևեկություն:

4.4. Առևտուր և սպասարկում

- Նախատեսվում է ուշադրության կենտրոնում պահել ոլորտի օբյեկտների գործունեության համապատասխանությունը օրենսդրական պահանջներին:

4.5. Հողօգտագործում, գյուղատնտեսություն

- Աջակցել ոռոգման համակարգերի վերանորոգման և ընդլայնման աշխատանքներին:

4.6. Բնություն և շրջակա բնական միջավայրի պահպանություն

- Հիմնովին բարելավել քաղաքի սանիտարական վիճակը:
- Կասեցնել քաղաքի կանաչապատ և ընդհանուր օգտագործման տարածքների ապօրինի շահագործումը:

Հրատապ խնդիր է համայնքային աղբավայրը սանիտարահիգիենիկ նորմերին և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելը:

4.7. Կրթություն

- Թարմացնել նախակրթարանների և մասնագիտացված դպրոցների նյութատեխնիկական բազան: Անապահով ընտանիքների երեխաների համար մանկապարտեզներում ստեղծել նախադպրոցական կրթության անվճար խմբեր:
- Ժամանակի ընթացքում նվազեցնել նախակրթարանների և մասնագիտացված դպրոցներ հաճախողների համար սահմանված վարձավճարները:
- ապահովել համայնքի կրթամշակութային և մարզական հիմնարկների անխափան և նպատակային գործունեությունը, ձեռնարկել միջոցառումներ նրանց զբաղեցրած շենքերի հիմնական կամ մասնակի վերանորոգման և գույքի ձեռք բերման ուղղությամբ:
- Աջակցել համայնքի տարածքում գործող հանրակրթական դպրոցների գործունեությանը:
- Համայնքի նախադպրոցական հիմնարկներից 2-ը վերանորոգվել են, 3-ը ունեն հիմնանորոգման կարիք:

Չորս տարվա ընթացքում նախատեսվում է շարունակել և ավարտին հասցնել մանկապարտեզների վերանորոգման և գազաֆիկիացման աշխատանքները: Մանկապարտեզների ծանրաբեռնվածության խնդրի լուծման նպատակով կշարունակվեն նոր տարածքների շահագործման աշխատանքները:

4.8. Մշակույթ

- Վերականգնել քաղաքի մշակութային կյանքն ու ավանդույթները:
- Աջակցել արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը:
- Քաղաքի մշակութային կյանքի աշխուժացման գործում իրենց ուրույն դերակատարությունը կստանձնեն երաժշտական դպրոցը՝ օգտագործելով հիմնանորոգված դահլիճի հնարավորությունները, քաղաքային մշակույթի տունը, գեղարվեստի դպրոցն ու պարարվեստի դպրոց ստուդիան:
- Քաղաքապետարանի համապատասխան բաժինը զգալի ներդրում կապահովի ոլորտի ծրագրային համակարգման առումով, կազմակերպելով նաև բնակչության ազատ ժամանցը և նախաձեռնելով համագործակցություն հանրապետության մյուս մշակութային օջախների հետ:

4.9. Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ

- Նպաստավոր պայմաններ ստեղծել սպորտի և առողջ ապրելակերպի զարգացման համար
- Բազմաբնակարան շենքերի բակերում կառուցել խաղահրապարակներ, ստեղծել կանաչապատ տարածքներ:
- Ուշադրության կենտրոնում պահել ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր մարզադպրոցի կառուցումը:

4.10. Աշխատանք և սոցիալական ապահովություն

- Օգնություն և օժանդակություն ցուցաբերել սոցիալապես անապահով և զոհված ազատամարտիկների ընտանիքներին, պատերազմի վետերաններին:
- Երիտասարդության դերի բարձրացման նպատակով քաղաքապետարանի աշխատանքներին ներգրավել համայնքի երիտասարդությանը:
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների, փախստականների սոցիալական, բնակարանային, կոմունալ- կենցաղային պայմանների բարելավման համար:
- 2013-2016թթ. կառուցել հաշմանդամների տեղաշարժի համար թեք հարթակներ ինչպես հասարակական վայրերում, այնպես էլ վարչական շենքերում, ընտրությունների տեղամասային կենտրոններում:
- Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ կիրականացվի համայնքում սոցիալական պլանավորման քաղաքականության մշակում:

4.11. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ

4.11.1. Տեղեկատվական կենտրոններ

- Քաղաքապետարանում ներդրված վեբ-տեխնոլոգիաների վրա հիմնված Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգը (ՀԿՏՀ) հնարավորություն է տալիս ավտոմատացնել և արագացնել տեղական ինքնակառավարման աշխատատար շատ գործընթացներ, մասնավորապես՝ բյուջետավարումը և գործավարությունը: ՀԿՏՀ-ն առաջիկա տարիներին կրնա զգրկի ՏԻՄ լիազորությունների շրջանակում համակարգման ենթակա նոր բնագավառներ:
- Ստեղծել Քաղաքացիների սպասարկման գրասենյակ, որը բնակչությանը մեկ պատուհանի սկզբունքով տեղեկատվություն կտրամադրի, կօգտագործի ՀԿՏՀ-ի ռեսուրսները՝ իր աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելու համար:
- Ներդնելով էլեկտրոնային ստորագրության փաթեթը՝ մարզպետարանի, նախարարությունների և համայնքների հետ փաստաթղթաշրջանառության գործընթացում, համայնքն արդեն իսկ ներգրավվել է էլեկտրոնային կառավարման համապետական համակարգում:

Վերոհիշյալ խնդիրների լուծումը հնարավորություն կտա բարձրացնել քաղաքապետարանի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը, համայնքի անդամներին՝ առավել ակտիվորեն մասնակցել համայնքի կառավարմանը:

4.11.2. Զարգացման ծրագրեր և միջազգային համագործակցություն

- Ազգային սոցիալական բնակարանային սոցիալիստիկ հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում 1.6 հա-ի վրա Սոցիալական բնակարանային համալիրի կառուցում:
- UNDP “Կանաչ լուսավորություն” ծրագրի շրջանակներում համայնքի լուսավորության ցանցի ընդլայնում:
- Ռուսաստանի Կիրովսկ քաղաքի հետ համագործակցության ամրապնդում:
- Նախատեսվում է համագործակցության ուղիներ փնտրել դիվանագիտական կառույցների, միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների հետ:
- Կարևորելով միջազգային համագործակցությունը որպես համայնքի արդյունավետ զարգացման բաղադրիչ, քաղաքապետարանը կշարունակի համագործակցային ծրագրերին մասնակցելու աշխատանքները տարբեր ձևաչափերով:

4.11.3. Հանրային կապեր, լրատվություն

- Քաղաքի մարդաշատ վայրերում տեղադրված տեղեկատվական ցուցատախտակների վրա նախատեսվում է հետևողականորեն արտացոլել քաղաքապետարանի նորությունները, հսկողությունները, ավագանու նիստերի արձանագրությունները:
- Նախատեսվում է մշտապես լուսաբանել ՏԻՄ ընթացիկ աշխատանքները, իսկ համայնքի համար կարևորագույն նշանակություն ունեցող հարցերի լուծման նպատակով կազմակերպել տարբեր ձևաչափի հանրային քննարկումներ:
- Նախատեսվում է ապահովել համայնքի վեբ-կայքի և ՀԿՏՀ-ի հասանելիությունը համացանցում, որը հնարավորություն կտա առցանց երկխոսության քաղաքապետարանի, ավագանու և քաղաքացիների միջև:
- Նախատեսվում է բնակչության հետ համայնքի ղեկավար անձանց անմիջական հանդիպումների, քննարկումների միջոցով բնակչության լայն խավերին

առավելագույնս ներգրավել հիմնախնդիրների բարձրացման և դրանց համարժեք լուծումներ տալու գործին:

4.12. Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն

- Քաղաքապետարանի աշխատանքները կազմակերպել բաց և թափանցիկ:
- Համայնքի բնակչությանն իրազեկել համայնքի ղեկավարի և ավագանու կողմից ընդունված որոշումների մասին:
- Պարբերաբար կազմակերպել համաքաղաքային և թաղային հանդիպումներ:
- Քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննության առնել օրենքով սահմանված ամենասեղմ ժամկետներում: Օպերատիվ լուծում տալ բնակչության կողմից առաջ քաշած խնդիրներին:
- Ավագանու նիստերին մասնակից դարձնել քաղաքի մտավորականության ներկայացուցիչներին:
- Կոնկրետ միջոցառումներ իրականացնել համայնքային բյուջեի եկամուտների ավելացման և ծախսերի առավել նպատակային օգտագործման ուղղությամբ:
- Ուշադրության կենտրոնում կապիվի քաղաքապետարանի կողմից կնքվող պայմանագրերի, ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների օրինականության ապահովումը, անհրաժեշտության դեպքում համայնքի շահերը կներկայացվեն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դրանք կպաշտպանվեն դատարանում (հայցվոր, պատասխանող, երրորդ անձ):

4.13. Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն

- Կշարունակվի քաղաքապետարանի պատասխանատու անձանց ակտիվ մասնակցությունը Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպվող դասընթացներին՝ գործնականում դրանց համար ոլորտային համապատասխան լուծումներ մշակելու նպատակով:
- Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման համակարգումը կշարունակվի անցնելով դրանցում ներգրավված կառույցների՝ իրենց մասնակցության ձևաչափի վերաբերյալ իրազեկության ավելի բարձր մակարդակի:

4.14. Այլ ոլորտներ

- Տարեցների համար ստեղծել ժամանցի կազմակերպման կենտրոն:
- Քառադի կիրճում ստեղծել ակտիվ հանգստի և ժամանցի կազմակերպման հանրային գոտիներ:

5. Համայնքի ֆինանսական միջոցների վերլուծություն և կանխատեսում

Տեղական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրներն են՝ հողի հարկը, գույքահարկը, պետական տուրքի որոշ տեսակներ, տեղական տուրքերն ու վճարները, ծնողական մուտքերը, ինչպես նաև համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարումից և վարձակալությունից ստացվող գումարները:

Քաղաքապետարանի տնօրինության տակ է գտնվում պահուստային հողերի սահմանափակ քանակություն: Վերջին տարիներին շատ հողատաճքներ են հատկացվել կառուցապատման համար, սակայն տնտեսական դժվարությունների պատճառով այն իրականացվում է չափազանց դանդաղ:

Սեփական եկամուտների գծով մուտքերի ապահովման բնագավառում առկա են մի շարք դժվարություններ, առաջին հերթին համայնքի հնարավորությունները բնորոշող ստույգ տեղեկատվական բազայի բացակայությունը: Մասնավորապես՝

